Հաստատված է
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և
հրդեհային անվտանգության տեսչական
մարմնի կառավարման խորհրդի
20___ թվականի _____ի __-ի որոշմամբ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… 3

1.Տրանսպորտային անվտանգության ոլորտ …… 5

1.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

2. Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ…….. 11

2.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

3. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ …….…….…… 17

3.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

3.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

4. Քաղաքաշինության ոլորտ …… 22

4.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

4.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման ոլորտ …… 27

5.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

5.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

6. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամանակացույց 30

7. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների իրականացման ժամանակացույց……... 40

Ներածություն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18–ի թիվ 1363-Ա որոշմամբ սահմանված 2021-2026 թվականների ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր։

Ծրագիրը ներառում է Տեսչական մարմնի նպատակները և իր կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված կանխարգելիչ (այդ թվում իրազեկման) միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը և ակնկալվող արդյունքը։

Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, տիեզերական գործունեության, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ու հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Դրանց կարգավորման ուղղությամբ 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքը պարբերաբար լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներով: Գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Տեսչական մարմինն իր կողմից վերահսկողական և օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացման վերաբերյալ մշտապես թարմացվող մանրամասն տեղեկատվություն է ներկայացնում իր պաշտոնական ինտերնետային կայքում: Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերը կրում են հետևողական բնույթ և

նպաստում են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ իրազեկվածության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հաշվի առնելով Տեսչական մարմնի կողմից կարգավորվող խնդիրների կենսական նշանակությունը հանրության համար՝ թեժ գծի հեռախոսահամարով մշտապես տրամադրում է տեղեկատվություն և խորհրդատվություն: Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային դիմում ներկայացնելու համար, որը միտված է դիմումների քննարկման գործընթացը առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելուն:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա խնդիրների համակողմանի և արհեստավարժ լուծումը պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ՝ թե՛ մարդկային, թե՛ տեխնիկական: Առաջնահերթությունների թվում է մարդկային կապիտալի զարգացման նպատակով մասնագիտական վերապատրաստումների (այդ թվում՝ միջազգային) կազմակերպումը:

2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով սահմանված, սակայն տարաբնույթ օբյեկտիվ պատճառներով չիրականացված միջոցառումները ևս ներառվել են 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրում:

Վերահսկողության ոլորտների առկա խնդիրները և ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներն Ծրագրում առանձնացված են ըստ բնագավառների:

1.Տրանսպորտային անվտանգության բնագավառ

1.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2022 թվականի գործունեության ծրագիրը ընդգրկում է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի ոլորտում կատարված հսկողական, վերահսկողական միջոցառումների, այդ թվում ստուգումների շնորհիվ բացահայտված հետևյալ ռիսկերի հետևողական նվազեցմանն ուղղված միջոցառումները։

1. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներով։ Անհրաժեշտ է ապահովել բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների շահագործումը, ուղևորների անվտանգությունը և սպասարկման պատշաճ մակարդակը։

2. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ։

3. ՀՀ տարածքում Հայավտոկայարան ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի խնդիրները վերաբերում են երթուղիների սպասարկման չվացուցակներով հաստատված փոխադրումների կազմակերպման ժամային գրաֆիկի պահպանման, ավտոկայարանային ծառայությունների մատուցման, ուղեբեռի ժամանակավոր պահպանման, ուղևորների նստեցման և երթևեկության անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացներին։

4. 2021 թվականի ընթացքում ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և ՀՀ մյուս խոշոր

բնակավայրերում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 433 արձանագրություն, սակայն, նշված էական բարելավում չի արձանագրվել՝ թերի գործիքակազմի պատճառով: Անհրաժեշտ է լրացուցիչ և/կամ ավելի խիստ վերահսկողական մեխանիզմների կիրառում [օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված տույժերի չափերի բարձրացում]:

5. 2021 թվականի ընթացքում հանրությունից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են միջմարզային կանոնավոր երթուղիների սպասարկման չվացուցակների անհստակությանը, զուգահեռ շահագործվող երթուղիների չվացուցակների կրկնությանը, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, մրցույթային հանձնաժողովի սահմանված փոխադրավարձի գերազանցմամբ երթուղիների սպասարկման իրականացմանը, ինչպես նաև որոշ կանոնավոր երթուղիների ուղեգծերով բազմաթիվ ոչ կանոնավոր և ապօրինի տաքսամոտորային տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացմանը:

6. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ: Տվյալ ոլորտում վերահսկողությանը խոչընդոտող հիմնական պատճառներն են նյութատեխնիկական ռեսուրսների (ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ ճշտության կշեռքների ապահովում և այդ նպատակով ավտոճանապարհներին առանձնացված հատուկ գրպանիկների առկայություն, վտանգավոր բեռների փոխադրումների վերաբերյալ Լիազոր մարմնի և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվության էլեկտրոնային բազաներին առցանց միացում և այլն) պակասին, աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակին:

7. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումն իրականացվում է

բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող այլ կազմակերպության տոմսարկղերից: Օրենսդրության սույն պահանջի անտեսումը առաջացնում է միջպետական տվյալ երթուղով մեկնող ուղևորների պատշաճ սպասարկմանը և անվտանգության ապահովմանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև հավասար մրցակցային պայմանների ապահովում:

8. *Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ:

*Տվյալ գործառույթը հնարավոր է կատարել միայն համապատասխան օրենսդրական փոփոխությունների և համապատասխան մասնագետների համալրման պարագայում

9. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերը ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: 2021 թվականի ընթացքում ՀՀ-ում գործող թվով 47 տեխնիկական զննության կայանում իրականացվել են մշտադիտարկումներ: Մշակվել է տեխնիկական զննության կայանի ստուգում իրականացնելու համար նախատեսված ստուգաթերթ, որը հաստատման փուլում է: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ պլանավորելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ ՀՀ կառավարության կողմից հաստատված մեթոդաբանություն:

10. Համաձայն ««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի օգոստոսի 16-ից, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվող գազաբալոնային սարքավորումների տեղադրմանը, գազաբալոնների պարբերական վկայագրմանը և դրանց լցավորմանը ներկայացվող պահանջների նկատմամբ վերահսկողությունը վերապահվել է Տեսչական մարմնին, սակայն մինչ օրս առկա չեն լիցենզավորման կարգը, գազալցման կայաններին ներկայացվող պահանջները և այլն: Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության

հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է տվյալ գործառույթի իրականացմանը:

11. ՀՀ տարածքից և դեպի ՀՀ տարածք իրականացվող միջպետական, կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ, ինչպես նաև ելնելով ԵԱՏՄ կանոնակարգերի պահանջներից, տեսչական մարմնին օրենսդրորեն վերապահվել է ՀՀ սահմանային անցման կետերում ամենօրյա 24 ժամյա հերթափոխային աշխատանքային ռեժիմով վերահսկողական գործառույթների լիազորություններ 2022 թվականի հունվարի 1-ից, սակայն մինչ օրս օրենսդրական դաշտը կարգավորված չէ, որի բացակայությունն էլ խոչընդոտներ է ստեղծում տվյալ գործառույթի իրականացման համար:

12. Տեսչական մարմնի ուշադրության շրջանակում շարունակում են մնալ ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային ենթակայության տեղական նշանակության պետական ավտոճանապարհներին (ներառյալ պաշտպանական գոտիներում) տեղադրված գովազդները (գովազդային վահանակները): 2021 թվականի ընթացքում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել է միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 382 գովազդային վահանակ, կազմվել է 155 արձանագրություն:

13. Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է ԵԱՏՄ մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների նկատմամբ հսկողության իրականացմանը, որի օրենսդրական դաշտը մինչ օրս կարգավորված չէ:

1.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները միտված են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերացմանը, բացահայտված ռիսկերի նվազեցմանը և Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովմանը:

Նախատեսված հիմնական միջոցառումները ներառում են.

- *օրենսդրական դաշտի կարգավորմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.*
- ««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով սահմանված են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվող գազաբալոնային սարքավորումների տեղադրմանը, գազաբալոնների պարբերական վկայագրմանը և դրանց լցավորմանը ներկայացվող պահանջները, սակայն առկա չեն լիցենզավորման կարգը, գազալցման կայաններին ներկայացվող պահանջները և այլն:
- Միջպետական բեռնափոխադրում իրականացնող ծանրաքաշ մեքենաների նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով՝ Տեսչական մարմինը մասնակցում է ԵԱՏՄ թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգի ձևավորման շրջանակներում կատարվող աշխատանքներին:
- «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեությանը ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու նպատակով նախատեսվում է ներկայացնել առաջարկություններ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշումների մեջ համապատասխան լրացումներ կատարելու համար:

➢ *տեսչական մարմնի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման ապահովում, միասնական աշխատելաոճի ձևավորում.* Տրանսպորտային

անվտանգության վարչության կողմից տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում.

- *կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն.

- Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ առողջապահության նախարարի 04.08.2020թ. թիվ 17-Ն հրամանի հավելված 3-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում շարունակվող կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով ցամաքային ուղևորատար տրանսպորտի գործունեության ոլորտում կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոններով» սահմանված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային միջոցառումներին ներկայացվող պահանջների պահպանման ուղղությամբ Տեսչական մարմնին վերապահված գործառույթների հստակ և լիարժեք կատարում.

- *միջազգային փորձն* ուսումնասիրելու նպատակով տեսակոնֆերանսների կազմակերպում, այդ թվում՝ նաև TAIEX-ի շրջանակում.

- *համագործակցություն շահագրգիռ մարմինների հետ*, այդ թվում՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև ՀՀ ոստիկանության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ օրենսդրական կարգավորումները կատարելագործելու, միասնական պետական մոտեցում ձևավորելու նպատակով:

2. Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ

2.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2022 թվականի գործունեության ծրագիրը կազմված է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում իրականացրած տեխնիկական ստուգումների, էներգահամակարգում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների արդյունքում բացահայտված խախտումների պատճառների, էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց պատկանող էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացրած տեղեկատվությունների վերլուծությունների, քաղաքացիներից և տնտեսվարող սուբեկտներից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների և ռիսկերի հիման վրա: Մասնավորապես,

1. Ներկայումս էներգետիկայի բնագավառում գործող մի շարք տեխնիկական կանոնակարգեր, որոնք հաստատվել են Ստանդարտացման մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ուժը կորցրել են պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Համաձայն Տեխնիկական կանոնակարգման մասին ՀՀ օրենքի՝ ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջների սահմանազատմամբ պայմանավորված, նշված տեխնիկական կանոնակարգերը նոր օրենսդրությամբ չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և, հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործառույթները հիմնված են վերոգրյալ տեխնիկական կանոնակարգերի վրա, դրանց ուժը կորցրած ճանաչելու դեպքում, Տեսչական մարմինը հնարավորություն չի ունենա իրականացնել օրենքով իրեն վերապահված գործառույթները:

2. Վերջին տարիներին ստացվող տեղեկությունների վերլուծությունը վկայում է, որ էլեկտրաէներգետիկական համակարգում մահացու ելքով պատահարների շուրջ 97 տոկոսը տեղի է ունենում 6, 10/0.4 կՎ, ինչպես նաև 35 կՎ լարման ենթակայաններում և 6 կՎ, 10 կՎ, 35 կՎ լարման օդային գծերի տակ:

3. Վերջին տարիներին ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած մահացու ելքով պատահարների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ դրանց զգալի մասը տեղի են ունեցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ի կողմից օգտագործվող մի շարք 6, 10/0.4 կՎ, ինչպես նաև 35 կՎ լարման ենթակայաններում և 0.4 կՎ, 6 կՎ, 10 կՎ, 35 կՎ լարման օդային գծերում, որտեղ առկա են էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների, էլեկտրահաղորդաբաշխման, շահագործման անվտանգության և էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով ներկայացված պահանջների կոպիտ խախտումներ: Դրանց մի մասը փաստացի չեն գտնվում «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքներ, ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում է ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Նշված էլեկտրատեղակայանքները նախկինում պատկանել են այգեգործական ընկերություններին կամ այլ կազմակերպություններին, իսկ այժմ դրանք համարվում են տիրազուրկ: Առկա են նաև փաստացի տնտեսվարող սուբյեկտներին պատկանող ենթակայաններ, որոնց էլեկտրատեղակայանքները առանց համատեղ շահագործման և անվտանգության կանոնների պահպանման պարտավորությունների վերաբերյալ կնքված պայմանագրերի միաժամանակ օգտագործվում են նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրամատակարարումն ապահովելու համար: Ստեղծված իրավիճակը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

4. Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ գազամատակարարման բնագավառում մահացու ելքով բոլոր պատահարները տեղի են ունենում գազի ներտնային գազասպառման համակարգում:

5. Հայաստանի Հանրապետությունում առկա են էլետրահաղորդման օդային գծերի (այսուհետ՝ ՕԳ), էլեկտրահաղորդման մայրուղային գծերի (այսուհետ՝ ՄԳ), գազատարների և մայրուղային գազատարների անվտանգության գոտիների

բազմաթիվ խախտումներ։ Դեռևս խորհրդային տարիներից ի վեր ՀՀ-ում առկա են բազմաթիվ շենք շինություններ և այլ տնտեսական գործունեություն իրականացնող ընկերություններին պատկանող կառույցներ, որոնք գտնվում են վերոնշյալ անվտանգության գոտիներում։ Միաժամանակ 1990-ական թվականներից մինչ 2018 թվականը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից տրված շինարարության թույլտվության հիման վրա էներգատեղակայանքների անվտանգության գոտիներում կառուցվել են բազմաթիվ շենքեր և շինություններ, որոնք հետագայում սեփականաշնորհվել են կառուցապատողների կողմից։ Ստեղծված իրավիճակն անվտանգության տեսանկյունից սպառնալիք է մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին։

Օրենքով և ՔՏՀԱՏՄ կանոնադրությամբ վերապահված գործառույթներն իրականացնելու համար ՔՏՀԱՏՄ Էներգետիկայի և էներգասպառման վարչությունում ու տարածքային բաժիններում անհրաժեշտ մասնագիտական հաստիքների ոչ բավարար քանակը խոչընդոտում է նշված գործառույթների, ինչպես հնարավոր ռիսկերի գնահատման և նվազեցման աշխատանքների լիարժեք իրականացմանը։ Մասնավորապես, հնարավոր չէ էներգատեղակայանքներում և դրանց օբյեկտներում առկա ռիսկերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ քանակությամբ ստուգումների իրականացումը, տարեկան շուրջ 1200 էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տրամադրելու նպատակով տեխնիկական ստուգումների պատշաճ կարգով իրականացումը, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննություններն իրականացնելու համար ստեղծվող հանձնաժողովների կազմերը սահմանված նվազագույն թվով մասնագետներով համալրումը, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում տեղի ունեցած պատահարների պատշաճ վերլուծությունը, ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների ու վերապահված այլ գործառույթների և համակարգման այլ գործընթացների պատշաճ իրականացումը։

2.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ Բացահայտված խնդիրները կարգավորելու համար առաջնային է *օրենսդրական փոփոխությունների* իրականացումը։ Մասնավորապես,

- Տեսչական մարմնի գործառույթներն ավելի արդյունավետ դարձնելու համար, անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում։ 2021 թվականին օրենքում փոփոխություն կատարելու նպատակով նախաձեռնվել են միջոցառումներ,

որոնք ավարտին կհասցվեն 2022 թվականի ընթացքում։ Առաջարկվող փոփոխություններում ներառվելու է նաև Տեսչական մարմնի գործառույթների շրջանակի ընդլայնում, մասնավորապես, էլեկտրաէներգետիկական համակարգում մինչև 110 կՎ լարման էներգատեղակայանքներում տեխնիկական ստուգումների իրականացում, որոնց շնորհիվ էապես կնվազի 10/0.4 կՎ, ինչպես նաև 35 կՎ լարման ենթակայաններում և 6 կՎ, 10 կՎ, 35 կՎ լարման օդային գծերում պատահարների, այդ թվում մահացու ելքերով պատահարների թիվը։ Հաշվի առնելով ՀՀ-ում առկա մինչև 110 կՎ լարման էներգատեղակայնքների մեծ քանակությունը (միայն 2019-2020թթ. լարման տակ է դրվել շուրջ 1177 էլեկտրատեղակայանք)՝ անհրաժեշտություն կառաջանա Տեսչական մարմինը համալրել նոր հաստիքներով։

- ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից էներգետիկայի և էներգասպառման ոլորտի թվով 17 տեխնիկական կանոնակարգեր, որոնց հետ առընչվում է Տեսչական մարմինը, ուժը կորցրած են ճանաչվելու, ինչն առաջացնում է անհրաժեշտություն էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության նոր կանոնների ու պահանջների մշակման։ Տեխնիկական կանոնակարգերը նոր իրավական ակտերով փոխարինելու աշխատանքներում Տեսչական մարմինը կունենա իր ակտիվ մասնակցությունը՝ առաջարկելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ իր կողմից իրականացված վերահսկողական աշխատանքի արդյունքում բացահայտված խախտումների, ինչպես նաև էներգահամակարգում տեղի ունեցած պատահարների վերլուծությունների հիման վրա.
- առաջնահերթության կարգով փոփոխություններ և լրացումներ է անհրաժեշտ կատարել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1933-Ն որոշման մեջ, որի շնորհիվ կլուծվի տիրազուրկ էներգատեղակայանքների հետ կապված խնդիրը։ 2022 թվականին նախատեսված է նաև ստեղծել աշխատանքային խումբ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների հետ համատեղ տիրազուրկ էներգատեղակայանքների խնդիրը արձանագրելու, գույքագրելու, գնահատելու, վերլուծելու և փուլային եղանակով լուծումներ առաջարկելու նպատակով.

- մարդու կյանքին և առողջությանը վնասի պատճառմամբ պատահարները կանխելու համար պահանջվում է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման մեջ՝ խստացնելով և հստակեցնելով ներտնային գազասպառման համակարգերի սպասարկմանը ներկայացվող պահանջները: Խնդրի կարգավորմանը կնպաստի նաև ներտնային գազասպառման համակարգերի սպասարկման մենաշնորհի վերացումը և շուկայի ազատականացումը, ինչի վերաբերյալ ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարությունը ստեղծել է աշխատանքային խումբ և ընթանում են ակտիվ քննարկումներ նաև Տեսչական մարմնի մասնակցությամբ: Գազի ներտնային սպառման անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմինի կողմից առաջարկվել է ներդնել ներտնային գազասպառման անվտանգության մոնիտորինգի համակարգ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման փոփոխության աշխատանքները սկսվել են 2021 թվականին, ընթանում են քննարկումներ և ավարտին կհասցվի 2022 թվականին: Նշված փոփոխությունները կհանգեցնեն վերահսկողության մեխանիզմների կատարելագործմանը.
- վերոնշյալ իրավական ակտերում առաջարկվող փոփոխությունների և լրացումների ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել նաև ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածներում:

➢ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների

ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկի աստիճանը, ինչպես նաև տեղի ունեցած պատահարների վիճակագրությունը՝ 2022 թվականին ստուգումների տարեկան ծրագրում առաջնահերթությունը տրվել է էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին (մասնաճյուղերին) և իրենց պատկանող էներգատեղակայանքներին: Իսկ 2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների վերացման գործընթացի նկատմամբ հսկողությունը կսահմանվի վերստուգումների միջոցով.

- Տեսչական մարմնի նախաձեռնությամբ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների հետ համատեղ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի նպատակն է գույքագրել, գնահատել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում առկա էլետրահաղորդման օդային գծերի, էլեկտրահաղորդման մայրուղային գծերի, գազատարների և մայրուղային գազատարների անվտանգության գոտիների խախտումների վերաբերյալ իրավիճակը և, ուսումնասիրելով միջազգային փորձը, մինչև 2022 թվականի ավարտը առաջարկել լուծումների ճանապարհային քարտեզ.

- *կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

3. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ

3.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկերի աստիճանը, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում կատարված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների վերլուծությունը՝ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս՝ շեշտը դրվել է ներքոհիշյալ բարձր ռիսկային ոլորտներում առկա խնդիրները բացահայտելու և անվտանգությունն ապահովելու վրա։ Դրանք են՝

- ✓ արտադրական նշանակության օբյեկտներ,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայաններ,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներ,
- ✓ հրդեհապայթունավտանգ այլ օբյեկտներ։

Վերահսկողության արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել հրդեհային անվտանգության հայեցակարգային մոտեցումներ և ապահովել դրանց կիրարկումը։

2. 2021 թվականի ընթացքում ՀՀ մարզերի նախադպրոցական հաստատություններում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հաստատությունների 92 տոկոսը շահագործվում է հրդեհային անվտանգության կանոնների տարաբնույթ խախտումներով ընդհանուր առմամբ 1847 խախտում, ինչն իրական վտանգ է ներկայացնում մանկապարտեզ հաճախող երեխաների և հաստատությունների անձնակազմի կյանքի և առողջության համար։

3. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում շարունակվող կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված բուժ հաստատություններում մարդկանց զանգվածային ներկայությունը՝ բուժ հաստատությունների հրդեհաանվտագությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել հրդեհատեխնիկական հետազոտություններ։

4. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-Ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից հրդեհային և տեխնիկական

անվտանգության բնագավառի 2 տեխնիկական կանոնակարգ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշումները, որոնց հետ առնչվում է Տեսչական մարմինը, ուժը կորցրած են ճանաչվելու, ինչն առաջացնում է տվյալ ոլորտներում նոր կանոնների ու պահանջների մշակման անհրաժեշտություն, քանի որ ներկայումս գործող ստուգաթերթերում առկա մի շարք պահանջներ կկորցնեն իրենց իրավաչափությունը։

5. Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորագույնը արտադրական վտանգավոր օբյեկտների ըստ իրենց ծավալների և վտանգավորության տարանջատումն է և արտադրական վտանգավոր սարքավորում սարք հասկացության ընդգրկումը։ Նախատեսվում է նաև վարչական տույժերի չափերի տարանջատում՝ կախված վտանգավոր օբյեկտի սարքի ծավալներից և վտանգավորությունից։

6. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել ՔՏՀԱ տեսչական մարմինը։ Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել տեխնիկական կանոնակարգերը, ներկայացնել համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշումների մեջ համապատասխան լրացումներ կատարելու համար։

7. Հասարակական նշանակության օբյեկտներում հրդեհները և վթարները նախականխելու նպատակով նախաձեռնած Հասարակական նշանակության օբյեկտներում հրդեհի և տեխնածին վթարի հետևանքով անձանց կյանքի, առողջության և գույքի ապահովագրության հայեցակարգի նախագծի մշակման աշխատանքներին մասնակցություն:

8. ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 952-Լ որոշմամբ ՔՏՀԱՏՄ լիազորությունները համալրվել են ևս մեկ գործառույթով, այն է՝ տիեզերական գործունեության բնագավառում օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, այդ թվում՝ նաև ստուգումների միջոցով, ինչն իր հերթին ենթադրում է ստուգաթերթերի և ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության առկայություն:

3.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու, այդ թվում նաև մատնանշված խնդիրները կարգավորելու համար առաջնային է *օրենսդրական փոփոխությունների* իրականացումը: Մասնավորապես,

- Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելը.
- մասնակցություն Գազի տնտեսությունում անվտանգության պահանջներ սահմանող ենթաօրենսդրական իրավական ակտի մշակման աշխատանքներին.
- մասնակցություն Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջներ սահմանող ենթաօրենսդրական իրավական ակտի մշակման աշխատանքներին.
- Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ, ինչպես նաև տիեզերական գործունեության բնագավառում վերահսկողություն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ, ինչպես նաև տիեզերական գործունեության բնագավառում վերահսկողություն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի

«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

➢ 2022 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ստուգում տնտեսավարող սուբյեկտների բարձր ոլորտային ռիսկ ունեցող 688 օբյեկտում և միջին ոլորտային ռիսկ ունենող 50 օբյեկտում: Միաժամանակ, հետևողական լինելով նախկինում տրված կարգադրագրերի կատարման ընթացի նկատմամբ, ստուգումներին զուգահեռ կիրականացվեն վերստուգումներ:

➢ Դինամիկ քարտեզի հնարավորությամբ DATABASE MANAGEMENT SYSTEM ծրագիրն էապես կթեթևացնի Տեսչական մարմնի կողմից կատարվող աշխատանքը՝ միաժամանակ բացառելով կրկնվող տեղեկատվության մուտքագրումը և ռիսկի հաշվարկի սուբյեկտիվությունը, շահերի բախումը: Ծրագրին կից դինամիկ քարտեզը հնարավորություն կտա տեսնելու նախագծված (գործող) օբյեկտի տեղակայումը իրեն շրջապատող այլ օբյեկտների նկատմամբ, դրանց միջև հակահրդեհային միջտարածությունները, կառույցների հրդեհավտանգավորության աստիճանը**:

**Տվյալ միջոցառումը հնարավոր է կատարել միայն համապատասխան ֆինանսավորման պարագայում

➢ 2021 թվականի ընթացքում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտված խախտումների վերացման միջոցառումների ընթացքը հսկողության տակ պահելու նպատակով՝ 2022 թվականին կկատարվեն շրջայցեր հետազոտված առավել ռիսկային նախակրթարաններ և հրդեհատեխնիկական հետազոտություններ՝ Երևանի նախակրթական հաստատություններում:

➢ Հրդեհատեխնիկական հետազոտություններ կիրականացվեն նաև ՀՀ տարածքում գործող բուժ հաստատություններում:

➢ Նախատեսվում է մասնակցել հասարակական նշանակության օբյեկտներում հրդեհները և վթարները նախականխելու նպատակով 2020 թվականին նախաձեռնված Հասարակական նշանակության օբյեկտներում հրդեհի և տեխնածին

վթարի հետևանքով անձանց կյանքի, առողջության և գույքի ապահովագրության հայեցակարգի՝ նախագծի մշակման աշխատանքներին:

- Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված է հրդեհային և տեխնիկական հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից, հետևաբար, կառուցվածքային վարչության կողմից կնախատեսվի տարածքային ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների *վերապատրաստումների* կազմակերպում:

- Ստուգումների և հետազոտությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է սերտորեն *համագործակցել* ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

- Հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման, ինչպես նաև կառույցի նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով կառուցվածքային ստորաբաժանման կողմից կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ ՀԿ-ների և ԶԼՄ-ների մասնակցությամբ: Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է սոցիալական հոլովակների նկարահանում և տարածում:

4. Քաղաքաշինության ոլորտ

4.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1. Տեսչական մարմնի կողմից 2020-2021 թվականների ընթացքում իրականացված ստուգումները և վերահսկողական միջոցառումները վկայում են, որ քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտները շինարարական աշխատանքները կատարում են համաձայնեցված նախագծի և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների շեղումներով:

2. Դիմում-բողոքների, ինչպես նաև պետական մարմինների կողմից ներկայացված գրությունների հիման վրա կատարված վերահսկողական միջոցառումների արդյունքում՝ համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերում բացահայտվել են բազմաթիվ տարաբնույթ թերություններ և բացթողումներ: Մասնավորապես, համայնքների ղեկավարների կողմից տրամադրվում և համաձայնեցվում են սահմանված կարգի խախտումով նախագծման և շինարարության թույլտվություններ ու համաձայնեցվում են նախագծման թույլտվությանը անհամապատասխան աշխատանքային նախագծեր: Ակնհայտ է ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևանի վարչական շրջաններում քաղաքաշինական գործունեության նկատմամբ տարեկան տեսչական ստուգումների անհրաժեշտությունը, որոնք հնարավոր կլինի իրականացնել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացում կատարելուց հետո: Տեսչական ստուգումների շնորհիվ կբարձրանա համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերի որակը և կնվազեն նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներով համաձայնեցված աշխատանքային նախագծերի տրամադրման դեպքերը:

3. ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների վերաբերյալ նորմատիվ պահանջները՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապատված միջավայր), կառուցապատողների համար ստեղծում են կառուցապատմանն առնչվող մի շարք խնդիրներ:

4. Ստուգումները դեպի առավել ռիսկային ոլորտներ նպատակաուղղելու համար անհրաժեշտ է ներդնել իրավական կարգավորող մեխանիզմ, որը կապահովի համայնքների ղեկավարների կողմից ժամանակին և պատշաճ կերպով լրացված քաղաքաշինական փաստաթղթերի ներկայացումը Տեսչական մարմին:

5. Համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովումը:

6. Կառուցվող բազմաբնակարան շենքերի ստորգետնյա հարկերում բնակիչների համար նախատեսված ավտոկայանատեղիների ոչ բավարար լինելու պատճառով կից տարածքներում ավտոմեքենաների կայանման պատճառով ներհամայնքային ճանապարհները դառնում են դժվար անցանելի և առաջանում են խցանումներ: Ներկայումս ՀՀ գործող իրավական ակտերով նախատեսված է մինչև 40% կառուցապատում, որը, սակայն, չի բավարարում բազմաբնակարան շենքի բնակիչներին:

7. Մասնագետների արհեստավարժության խնդիր՝ հատկապես ստուգում իրականացնելու հարցում: Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված են ոչ միայն հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից, այլև քանակից: Հետևաբար, հաստիքների ավելացումը հնարավորություն կստեղծի քաղաքաշինության բնագավառում հասարակության անվտանգությունն ապահովելու համար:

4.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ 2022 թվականի ընթացքում նախատեսվում է կրկին անգամ առաջարկություններ ներկայացնել հետևյալ իրավական ակտերում *օրենսդրական փոփոխություններ* կատարելու վերաբերյալ՝

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքում Տեսչական մարմնին վերապահված հոդվածների պատասխանատվության գումարային սահմանային շեմը բարձրացնելու վերաբերյալ, որը կնպաստի քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից քաղաքաշինական

օբյեկտներում իրենց կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության որակի բարձրացմանը և խստացնի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը և պահպանումը.

• ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ներկայացնել առաջարկություն «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որը հնարավորություն ստեղծի Տեսչական մարմնին՝ միջնորդություն ներկայացնելու դեպքում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտներին տրամադրված լիցենզիաները և ներդիրներում ամրագրված մասնագետների որակավորումը վերանայելու համար.

• միաժամանակ առաջարկել «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ համապատասխան հոդված սահմանելու միջոցով՝ ստեղծել մեխանիզմ հեղինակային հսկողություն իրականացնող սուբյեկտներին՝ միջնորդություն ներկայացնելու միջոցով, տրամադրված արտոնագրերը վերանայելու (կասեցնել կամ դադարեցնել) համար.

• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ համատեղ աշխատանքի արդյունքում ՀՀ օրենսդրական փոփոխության միջոցով ներդնել մեխանիզմ՝ փորձագիտական եզրակացություն տրամադրող քաղաքաշինական սուբյեկտների կողմից տրված դրական եզրակացությունները կրկնակի փորձաքննության ենթարկելու նպատակով: Նշված փոփոխությունը Տեսչական մարմնին հնարավորություն կընձեռի ոչ իրավաչափ փորձագիտական եզրակացություն տրամադրող փորձագիտական ընկերություններին՝ միջնորդություն ներկայացնելու միջոցով, զրկել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու հնարավորությունից.

• առաջարկել համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին թիվ 624 որոշման մեջ, ինչը հնարավորություն կտա Տեսչական մարմնին իրականացնել տեսչական ստուգումներ ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևան համայնքի վարչական շրջաններում.

• ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների վերաբերյալ նորմատիվ պահանջների վերանայման մասին ներկայացնել

առաջարկ՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապատված միջավայր) տնտեսավարող սուբյեկտների կողմից անխոչընդոտ կառուցապատում իրականացնելու նպատակով։

• 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն և ՀՀՇՆ 30-01-2014 «Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի մարտի 31-ի թիվ 93-Ն հրամաններում առկա կառուցապատման տոկոսի վերաբերյալ նորմատիվ պահանջների մասին ներկայացնել առաջարկ բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ շենքերի կառուցման ժամանակ ստորգետնյա հարկերի (կայանատեղի) կառուցապատման տոկոսի սահմանային չափի բարձրացման նպատակով։ Սույն հրամանում բազմաբնակարան շենքերի ստորգետնյա հարկերի (կայանատեղի) կառուցապատման տոկոսի բարձրացումը որոշակիորեն կնպաստի ներկա պահին համայնքներում բնակելի կառուցապատման շրջաններում փողոցների անցանելիության և ավտոմեքենաների բնականոն տեղաշարժման ու կայանման խնդիրները։

➢ Տեսչական մարմնի կողմից առաջարկ կներկայացվի համայնքների կողմից տարեկան բարեկարգման ծրագրերում ներառել համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների վերանորոգման կամ բարեկարգման նախագծահաշվարկային փաստաթղթերում հնարավորության պարագայում, ներառել հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովմանը միտված միջոցառումներ։ Միաժամանակ Տեսչական մարմինը 2022 թվականի ընթացքում հսկողություն կսահմանի հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի պայմանների ապահովման նկատմամբ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1601-Լ որոշմամբ հաստատված ցանկում ներառված շենքերի կառուցման կամ վերանորոգման շինարարական աշխատանքների ժամանակ՝ ստուգումների և վերահսկողական աշխատանքների միջոցով։

➢ 2022 թվականի տարեկան ստուգումներին ընդառաջ վերապատրաստել ստորաբաժանումների աշխատակիցներին քաղաքաշինության բնագավառում ստուգում իրականացնելու ուղեցույցով։ Նախատեսվում է նաև միասնական

աշխատելառճ ձևավորելու նպատակով մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կողմից իրականացնել տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում: Հնարավորության դեպքում կկազմակերպվեն վերապատրաստումներ նաև կրթական հաստատությունների (հատկապես, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի) դասախոսների մասնակցությամբ:

- Վերահսկողության ոլորտում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու նպատակով կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հետ: Մասնավորապես, Տեսչական մարմինը կունենա իր մասնակցությունը քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների վարկանշավորման մեխանիզմի, ինչպես նաև աշխատանքային խմբի կազմում՝ քաղաքաշինական թույլտվությունների առցանց համակարգի ներդրման աշխատանքներին:

- *Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման ոլորտ

5.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1. 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, գրությունների հիման վրա և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները, պաշտոնեական կեղծիքների եղանակով չմասնավորեցվող հողամասերի օտարումը, ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը շարունակում են մնալ հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի կարևոր խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիր է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը, ինչն էական վնաս է հասցնում համայնքային և պետական շահերին:

2. 2021 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքներից շատերը վերաբերում են հերթապահ կադաստրային քարտեզների վարման աշխատանքների խախտումներին: Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1071-Ա որոշման՝ քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել Տեսչական մարմինը: Միևնույն ժամանակ կատարվել են փոփոխություններ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, համաձայն որի գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական տեսչական վերահսկողությունը կիրականացնի ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը: Սակայն վերահսկողության իրականացման իրատեսական գործիքակազմը բացակայում է:

3. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխատավության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել

տուգանքների ավելի մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող խախտումների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր խախտումները կանխելու համար:

4. Վերահսկողական գործառույթների իրականացումը ամբողջ ծավալով հնարավոր է ապահովել անձնակազմի թվաքանակի ավելացման և արդեն իսկ Տեսչական մարմնի կողմից ձեռք բերված անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության օգտագործման առկայության դեպքում:

5.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ Օրենսդրական դաշտի կարգավորման շրջանակում

- անհրաժեշտ է վերանայել հողօգտագործման բնագավառում խախտումների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքների չափերը.
- նախատեսվում է ներկայացնել «Գեոդեզիայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որում կներառվեն կարգավորումներ՝ ըստ անհրաժեշտության ստուգում իրականացնելու համար.
- պետական մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործությունը կանխելու նպատակով կներկայացվի առաջարկ՝ իրավական դաշտում համապատասխան կարգավորումներ սահմանելու վերաբերյալ, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում պաշտոնական լիազորություններն անցնելու հատուկ հանցակազմ նախատեսող արգելող նորմի նախատեսմանն ուղղված նախագիծ՝ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման նպատակով միջոցներ չձեռնարկելու համար:

➢ Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված է հսկողություն իրականացնող *մասնագետների քանակից և արհեստավարժությունից,* հետևաբար անհրաժեշտություն կա վերապատրաստումների կազմակերպումից զատ, հաստիքացուցակով ավելացնել տվյալ բնագավառում հսկողություն իրականացնող մասնագետների թվաքանակը:

➢ *Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության

մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, նկարահանել իրազեկող բնույթի անիմացիոն տեսահոլովակներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն։

Հավելված 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Վերջնա-ժամկետ
1	2	3	4	5	6
	ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
1	Բուժ հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	1. Բուժ հաստատությունների հրդեհավտանգավորության աստիճանի գնահատում, 2. Բուժ հաստատությունների բազավորման աշխատանքների իրականացում, 3. Բուժ հաստատությունների հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում 4. Բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկանքի նախապատրաստում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև մարտի 31-ը
2	Նախակրթական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	1. Երևանի նախակրթական հաստատությունների հրդեհավտանգավորության աստիճանի գնահատում, 2. 2021 թվականի հետազոտված առավել ռիսկային նախակրթարաններում ձեռնարկված միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ հսկողության սահմանում,	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև հունիսի 30-ը

		3. Բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկանքի նախապատրաստում			
3	Ստուգված տնտեսավարող սուբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովման նպատակով՝ 2022 թվականի ընթացքում ստուգված տնտեսավարողների թվով 738 օբյեկտների ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության բազավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
4	Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովման նպատակով՝ 2022 թվականի ընթացքում ստուգված տնտեսավարողների թվով 147 օբյեկտների ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության բազավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
5	Ստուգումների արդյունքների հիման վրա քաղաքաշինական բնագավառում տնտեսավարող սուբյեկտների բազաների ձևավորում	Քաղաքաշինության տեսակետից առավել ռիսկային տնտեսավարողների բացահայտում, 654 օբյեկտի վերաբերյալ տեղեկատվության ամփոփում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
	ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ				

1	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	1. Տրանսպորտի անվտանգության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում 2. Հողօգտագործման բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում 3. Քաղաքաշինության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև հունիսի 30-ը
2	Քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ կազմել և առաջարկության ձևով ներկայացնելը	Հողօգտագործման բնագավառում համայնքային շահերի պաշտպանության ապահովման նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն	Մինչև մարտի 31-ը
3	«Գեոդեզիայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ կազմել և առաջարկության ձևով ներկայացնելը	Գեոդեզիայի բնագավառում պետական վերահսկողական գործառույթների հստակեցման նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն	Մինչև հունիսի 30-ը
4	«Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթներն ավելի արդյունավետ դարձնել, պատահարների և մահացու ելքով պատահարների կանխարգելման նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողությա ն վարչություն	Մինչև մարտի 31-ը

5	Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տեխնիկական անվտանգության բնագավառում վերահսկողական մեխանիզմների հստակեցման նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև հունիսի 30-ը
6	Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Քաղաքաշինական պետական վերահսկողական գործառույթների խստացման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	Մինչև մարտի 31-ը
7	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «Էլեկտրակայանքների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 42-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
8	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հատուկ կայանքների էլեկտրասարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 75-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
9	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Ներտնային գազասպառման համակարգերի սպասարկման մակարդակի բարձրացում և մահացու ելքով պատահարների կանխարգելու նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև հունիսի 30-ը

10	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 119-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
11	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Էլեկտրակայանների և ջերմային ցանցերի ջերմաուժային սարքավորումների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 144-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
12	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 363-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
13	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի «Էլեկտրաուժային տեղակայանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 554-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը

14	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի «Կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքերի միացումները սահմանազատման կետին և ծխաօդատար ուղիներին՝ շահագործման մեջ գտնվող և նոր կառուցվող բազմաբնակարան շենքերում. անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 784-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
15	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 961-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
16	ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Վերահսկման բնագավառներում անվտանգության ապահովման նպատակով ստուգումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև դեկտեմբերի 30-ը
17	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Էլեկտրական բաշխիչ սարքերին և ենթակայանների սարքվածքին ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1033-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը

18	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն, Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև մարտի 31-ը
19	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
20	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1605-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
21	ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տիեզերական գործունեության, ինչպես նաև ԵԱՏՄ մի շարք կանոնակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև դեկտեմբերի 30-ը

22	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1843-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
23	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1933-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
24	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1939-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
25	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից, անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
26	Մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի	Մատակարարների և բնակիչ սպառողների համար, անկախ սեփականության ձևից,	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	Մինչև հունիսի 30-ը

	տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին	անվտանգության նոր պահանջների սահմանման վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	առության վարչություն	վարչություն, Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	
27	ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տեսչական մարմնի գործառույթների և ՏՄ ղեկավարի լիազորությունների հստակեցման նպատակով Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև մարտի 31-ը
28	ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Կառուցապատողի համար արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում՝ բլոկավորված տների հատվածում, անխոչընդոտ կառուցապատում իրականացնելու վերաբերյալ Լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	Մինչև մարտի 31-ը
	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ				
29	ՀՀ ԲՈՒՀերի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում	6 մասնագետի վերապատրաստում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	Մինչև դեկտեմբերի 30-ը
30	Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում	Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների բոլոր աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Որակի ապահովման վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը

	ՔՏՀԱՏՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ				
31	Տարածքային ստորաբաժանումների կողմից 2019-2021 թվականների ընթացքում կատարած աշխատանքի ուսումնասիրություն	Թերությունների և խախտումների բացահայտում, դրանց առաջացումը կանխելու նպատակով միջոցառումների ձեռնարկում	Որակի ապահովման վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև դեկտեմբերի 30-ը

Հավելված 2

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	ժամկետ
1	Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում: 1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ, 2. Քաղաքաշինության ոլորտ, 3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ, 4. Էներգետիկայի և էներգասպառման ոլորտ: 5. Գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտ	Սահմանված կանոնների պահպանման և իրազեկման մակարդակի բարձրացում տնտեսավարող սուբյեկտների և հասարակության շրջանում: Ըստ ոլորտների՝ **1.** Թվով 16 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 4 աշխատանք) **2.** Թվով 12 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 3 աշխատանք), **3.** Թվով 20 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 5 աշխատանք), **4.** Թվով 8 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք), **5.** Թվով 12 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 3 աշխատանք),	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 2. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 3. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 4. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 5. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ

2	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ:	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովվում, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին: 1. Երևան՝ 3 հանդիպում, 2. Արագածոտն՝ 1 հանդիպում, 3. Արարատ՝ 1 հանդիպում, 4. Արմավիր՝ 1 հանդիպում, 5. Գեղարքունիք՝ 1 հանդիպում, 6. Կոտայք՝ 1 հանդիպում, 7. Լոռի՝ 1 հանդիպում, 8. Տավուշ՝ 1 հանդիպում: 9. Շիրակ՝ 1 հանդիպում, 10. Սյունիք մարզ՝ 1 հանդիպում, 11. Վայոց Ձոր՝ 1 հանդիպում	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների, ղեկավարի տեղակալների մասնակցությամբ	1. 1 հանդիպումը 1-ին եռամսյակ հունվար ամիս, 3-րդ տասնօրյակ. 1 հանդիպումը՝ 3 -րդ եռամսյակ, հուլիս ամիս՝ 3-րդ տասնօրյակ, 1 հանդիպումը՝ 4 -րդ եռամսյակ, դեկտեմբեր ամիս՝ 3-րդ տասնօրյակ 2. 1 հանդիպումը 1-ին եռամսյակ, փետրվար ամիս, 3-րդ տասնօրյակ, 3. 1 հանդիպումը 1-ին եռամսյակ, մարտ ամիս, 3-րդ տասնօրյակ. 4. 1 հանդիպումը 2-րդ եռամսյակ, ապրիլ ամիս, 3-րդ տասնօրյակ. 5. 1 հանդիպումը 2-րդ եռամսյակ, մայիս ամիս, 3-րդ տասնօրյակ. 6. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, հունիս ամիս, 3-րդ տասնօրյակ. 7. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, հուլիս ամիս, 3-րդ տասնօրյակ., 8. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, օգոստոս ամիս, 3-րդ տասնօրյակ.

					9. 1 հանդիպումը 3-րդ եռամսյակ, սեպտեմբեր ամիս, 3-րդ եռամսյակ, 3-րդ տասնօրյակ. 10. 1 հանդիպումը 4-րդ եռամսյակ, հոկտեմբեր ամիս, 3-րդ տասնօրյակ, 11. 1 հանդիպումը 4-րդ եռամսյակ, նոյեմբեր ամիս, 3-րդ տասնօրյակ
3	Իրազեկող հրապարակումների, մամուլի հաղորդագրությունների և տեսանյութերի պատրաստում և հրապարակում:	Հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում, թափանցիկ և հաշվետվողական աշխատանքների իրականացում: Ընդհանուր 60 մամուլի հաղորդագրություն: Թվով 6 իրազեկող տեսանյութ	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Յուրքանչյուր եռամսյակ 20-ական հրապարակում, 2 իրազեկող տեսանյութ:
4	Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ 2 մամուլի ասուլիսի կազմակերպում և անցկացում:	Տեսչական մարմնի և տպագիր, առցանց ԶԼՄ-երի, հեռուստաընկերությունների ներկայացուցիչների միջև համագործակցության, հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում:	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Առաջին եռամսյակ՝ մինչև մարտի 3-րդ տասնօրյակ: Երրորդ եռամսյակ՝ մինչև սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ

5	Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում:	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում, գնահատում:	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն և Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակի ամփոփումից հետո 1 ամսյա ժամկետում
6	Դոնոր կազմակերպությունների, ՀԿ-ների, պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում իրազեկող բնույթի սոցիալական գովազդային պաստառների պատրաստում և ՀՀ գլխավոր ճանապարհներին, ավտոմայրուղիներին տեղակայված վահանակներին դրանց տեղադրման աշխատանքների իրականացում:	Հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտի վերաբերյալ՝ մասնավորապես խոտածածկ և բուսածածկ հատվածներում հնարավոր հրդեհներից խուսափելու, հանրության շրջանում իրազեկվածության և անվտանգության մակարդակի բարձրացում, ինչպես նաև կանխարգելիչ աշխատանքների իրականացում:	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Անհրաժեշտ ֆինանսավորման դեպքում՝ 2-րդ և 3-րդ եռամսյակներ